



Տպագիր ամփոփագրի պայմանները կարող են փոփոխված լինել. Տպագիր ամփոփագրի պայմանները կայքում հրապարակված գործող պայմաններից տարբերվելու դեպքում անհրաժեշտ է դիմել մասնաճյուղ կամ առաջնորդվել կայքում առկա տարբերակով: Ամբողջական պայմանները՝ [հետևյալ հղմամբ](#):

### Սոցիալական հաշիվների բացման և սպասարկման սակագներ

| Հաշվի բացում                                  | Անվճար                                                                       |
|-----------------------------------------------|------------------------------------------------------------------------------|
| Հաշվի սպասարկում                              | Անվճար                                                                       |
| Հաշվի մնացորդի դիմաց հաշվարկվող տոկոսադրույք  | Համաձայն ֆիզիկական անձ հաճախորդների բանկային հաշիվների սպասարկման պայմանների |
| Փոխանցումների իրականացում                     | Անվճար                                                                       |
| Քաղվածքի (էլեկտրոնային կամ առձեռն) տրամադրում | Անվճար                                                                       |
| Հաշվի փակում                                  | Անվճար                                                                       |

Արդշինբանկն իրականացնում է ՀՀ դրամով սոցիալական փաթեթի հատուկ հաշիվների բացում և սպասարկում համաձայն ՀՀ Կառավարության 27.12.2012թ. N1691-Ն որոշմամբ հաստատված «Սոցիալական փաթեթի հատկացման կարգ»-ի դրույթների և նույն որոշման հիման վրա Բանկի կողմից ընդունված «Սոցիալական փաթեթի հատուկ հաշիվների բացման և սպասարկման պայմաններ»-ի:

«Սոցիալական փաթեթի հատուկ հաշիվների բացման և սպասարկման պայմաններ» - գործում են նոր հաճախորդների համար՝ 29.04.2026թ.-ից, գործող հաճախորդների համար՝ 12.05.2026թ.-ից:

Հաշվի վարումն իրականացվում է անկախիկ եղանակով հետևյալ ծառայություններից օգտվելու համար՝

- Առողջության ապահովագրություն
- Հիփոթեքային վարկի ամսական վճարի մարում
- Ուսման վճար
- Հանգստի ապահովում ՀՀ-ում
- Ախտորոշիչ հետազոտություններ և ստոմատոլոգիական ծառայություններ
- Մարզա-առողջարարական և սպորտային համալիրներ, լողավազաններ և այլ սպորտային կազմակերպություններ
- Ուսանողական վարկի ամսական վճարի մարում



## Կարևոր է իմանալ

- Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:
- Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա և այդ մասին հաշվետիրոջը տեղեկացնելու կարգը:
- Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ծանաչիր քո հաճախորդին» (Know Your Customer) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (նման պահանջի առկայության դեպքում):
- Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքված համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:
- Դուք իրավունք ունեք հաղորդակցվել «Արդշինբանկ» ԲԲԸ հետ ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «Ձեր ֆինանսական տեղեկատուն»՝ [www.fininfo.am](http://www.fininfo.am), ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է:

Հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործառնությունների կատարման ժամանակ գործող արտարժույթի փոխարկման պայմաններին կարող եք ծանոթանալ կայքի [Արտարժույթի փոխանակում](#) բաժնում: